Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.03.2018թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Համբարձումյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ ԳՊ/ԳԱՊ

Անդամներ

Ա. Եգանյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության գանձապետական պահառուի աշխատանքների կազմակերպման բաժնի պետ ԳՊ/ԳԱ

Ա. Գրիգորյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Մ. Միքաելյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Բացակայում է

Գ. Վարդապետյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Գնումները համակարգող

Լ.Սահակյան՝ ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/15» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ

են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ	ՀՎՀՀ 00067992, հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճ.1 էլ հասցե info@pamg.am

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/15 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	**հայտարարությունների պատրաստման և հեռուստատեսությամբ եթերի հեռարձակման ծառայություններ /նախահաշվային գինը՝ 21.240.000/**	17.266.667	3.453.333	20.720.000

Հանձնաժողովը որոշեց.

2. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ -ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

4. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/15 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել եզրակացության ներկայացման և հրավերի փաստաթղթերի ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	**Ա. Համբարձումյան**
հանձնաժողովի անդամներ՝	_____	**Ա. Եգանյան**
	_____	**Ա. Գրիգորյան**
	_____	**Մ. Միքաելյան**
Գնումները համակարգող՝	_____	**Լ.Սահակյան**